ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(«ՔԾՓԿ» ԲԲԸ)

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԵՐԵՎԱՆԻ «ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան - 2015

«ՔՇՓԿ» ԲԲԸ
Ելք 12/31
«10» 03 2015թ.

«Հաստատում եմ»
«ՔՇՓԿ» ԲԲԸ
Գլխ.աշխ. գծով փոխտնօրեն
Ռ.Ազարյան
2015թ.

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Երևանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի մասնաշենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ

Հետազննությունը կատարվել է Երևանի քաղաքապետարանի հետ 14.01.2015թ. համատեղ կնքված հ. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/1 աշխատանքային պայմանագրի համաձայն:

Երևանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բարդ հատակագծային լուծմամբ, բլուրի վրա տեղակայված, 1968թ. իրականացված համալիր կառույց է: Այն բաղկացած է կենտրոնական (№ 1) երկհարկանի մասնաշենքից և դրանից շինարարական-դեֆորմացիոն կարանով բաժանված ձախակողմյան հատվածամասից, ինչպես և կենտրոնական մասնաշենքից ~ 6,5 հեռավորության վրա գտնվող միահարկ մասնաշենքից (նկ. 1): Ընդ որում այն ունի ~ 3,0÷3,5 մ հատակների մակարդակների տարբերություն (ցածր է):

Մասնաշենքերի համառոտ նկարագրերը բերվում են ստորև, առանձին-առանձին:

### Կենտրոնական մասնաշենք ( 1)

Այն երկհարկանի, մեկ շքամուտքով և նախասրահով, հատակագծում ուղղանկյունաձև, 24,6x27,6 մ եզրաչափերով կառույց է (նկ. 2): Այն նախասրահում ունի եռաբազուկ սանդուղքներ:

Շենքի կենտրոնական հատվածի 2-րդ հարկում, առկա է 12,0x12,0մ հատակագծային չափերով ցուցասրահ, որի ծածկը փայտյա է (մի կողմից հենված գերանե սյուների վրա) և միջին հատվածում ունի 3,0x3,0 մ չափերով բաց երդիկ (նկ. 3):

Մասնաշենքն աջ կողմից ունի 6,5x22,5 մ հատակագծային չափերով, ~ 2,0 մ բարձրությամբ պատերով պարփակված բաց (առանց ծածկի) հարթակ, որի վրա




Նկ. 1. «Էրեբունի» պատմահնագիտական թանգարանի

գլխավոր հատակագիծը

առկա են 4 մ քայլով տեղակայված միաձույլ երկաթբետոնե լայնակամ հեծաններ, խարսխված մասնաշենքի և պարփակող պատերի հետ (նկ. 4):

Յարթակի գլխավոր ճակտային հատվածում առկա է միահարկ, հատակագծում ուղղանկյունաձև, 6,3x6,5 մ եզրաչափերով օժանդակ կառույց, որի կոնստրուկտիվ համակարգը լուծված է քարե 50 սմ հաստությամբ պատերով, միաձույլ երկաթբետոնե վերնածածկով ու հարթ տիպի տանիքով, ներքին կազմակերպված ջրահեռացմամբ::

Շենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ երկաթբետոնե տարածական կարկասով, միջհարկային ծածկերով և պատերով:

Կարկասի սյուների հիմքերն առանձին տիպի են, միաձույլ երկաթբետոնե սյունակալներով, իսկ պատերինը՝ ժապավենային, խամքարաբետոնից:

Պատերն ունեն 60 սմ հաստություն և իրականացված են տուֆաքարի «միդիս» տիպի շարվածքով, կարկասի լցվածքի ձևով:

Պարփակող պատերի երեսաշարն 2 կողմից սրբատաշ է, արտաքինից իրագործված տուֆե, իսկ ներսից՝ ֆելզիտե քարերով: Ընդ որում դրանք ձևավորված են հարուստ զարդաքանդակներով :

Պարփակող պատերի արտաքին երեսաշարը գետնախարսխային հատվածում բազալտե սրբատաշ քարերից է:

Միջհարկային ծածկերը հիմնականում հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր, իսկ 1-ին հարկի ծածկը ցուցասրահի հատվածում՝ կողավոր սալերից են: Առանձին տեղամասերում ծածկերը միաձույլ երկաթբետոնից են:

Միջնորմները պեմզաբետոնե մանրահատ բլոկների և սալերի շարվածքով են:

Տանիքը հարթ տիպի է, գլանափաթթոցային ջրամեկուսիչ շերտով, ներքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Գլխավոր ճակատի կողմից շենքն եզրային հատվածներում ունի հենապատերով և բազալտաքարե հատավոր աստիճաններով իրագործված սանդուղքներ: Ընդ որում հենապատերն հանդիսանում են հին շինությունների պատերի շարունակությունը, ունեն 50 սմ հաստություն և իրականացված են «միդիս» տիպի շարվածքով, բազալտե «քուրքատաշ» քարերից երեսաշարով:

**Ձախակողմյան թևի հատվածամաս ( 2)**

Այն միահարկ, հատակագծում ուղղանկյունաձև, 7,25x30,8 մ եզրաչափերով կառույց է (նկ. 5):



Նկ. 2. Կենտրոնական (1) մասնաշենքի տեսքը գլխավոր ճակատի կողմից



Նկ. 3. Բաց երդիկի տեսքը



Նկ. 4. Աջակողմյան բաց հարթակի տեսքը

Դրա կոնստրուկտիվ համակարգը շրջանակակապային կարկասով է, լուծված միահարկ, բազմաթռիչք, միաձույլ երկաթբետոնե կրող շրջանակներով, կապված միմյանց երկաթբետոնե հեծաններով ու կապային սալերով և պատերով:

Սյուների հիմքերն առանձին տիպի են, միաձույլ երկաթբետոնե սյունակալներով, իսկ պատերինը՝ ժապավենային, խամքարաբետոնից:

Պատերն ունեն 60 սմ հաստություն և իրականացված են բազալտաքարե «միդիս» տիպի շարվածքով:

Գլխավոր և ձախ կողածատային պատերի երեսաշարը բազալտե «քուրքատաշ» քարերից է: Ընդ որում գլխավոր ճակատային պատը հանդիսանում է վերը նշված սանդուղքների հենապատի շարունակությունը:

Տանիքը հարթ տիպի է, գլանափաթթոցային և ասֆալտաբետոնե ջրամեկուսիչ շերտով, ներքին կազմակերպված ջրահեռացմամբ: Ընդ որում տանիքը գլխավոր մասնաշենքի համար հանդիսանում է հարթակ (մետաղական բազրիքներով պարփակված բակ): Վերջինս կենտրոնական մասնաշենքի հետ հաղորդակցվում է դռնով և վերը նշված սանդուղքներով:

## Աջակողմյան մասնաշենք ( 3)

Այն միահարկ, հատակագծում ուղղանկյունաձև, 6,5x30,8 մ եզրաչափերով կառույց է, որի գլխավոր ճակատի հատվածը (18,0 մ երկարությամբ) նախկինում եղել է խանութ, իսկ մյուս հատվածը՝ հարթակ:

Շենքի կոնստրուկտիվ համակարգը միաձույլ երկաթբետոնե շրջանակակապային կարկասով է, լուծված կրող լայնական միաթռիչք շրջանակներով, կապված միմյանց երկայնական հեծաններով:

Կարկասի սյուների հիմքերն առանձին տիպի են, միաձույլ երկաթբետոնից, իսկ պատերինը՝ ժապավենային, խամքարաբետոնից:

Շրջանակի սյուներն ունեն 40x40 սմ, իսկ հեծանները՝ 60x60 սմ լայնական հատվածքի չափեր:

Պատերն ունեն 60 սմ հաստություն և իրականացված են բազալտաքարի «միդիս» տիպի շարվածքով:

Գլխավոր ճակատային (երկայնական) պատի երեսաշարը սրբատաշ է, իսկ կողածակատայինը՝ «քուրքատաշ» քարերից: Ընդ որում խանութի գլխավոր ճակատային պատում ամբողջ երկարությամբ (18 մ երկարությամբ) առկա է ցուցափեղկ, պատված լուսամուտային մետաղական վանդակներով: Հետին



Նկ. 5. Ձախակողմյան հատվածամասի (2) և դրա տանիքի տեսքը

երկայնական պատը նաև հենապատ է, որի շարունակությունը հանդիսանում է կենտրոնական մասնաշենքի բաց հարթակի պարփակող պատը:

Վերնածածկը հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերից են:

Միջնորմները պեմզաբետոնե մանրահատ սալերի շարվածքով են:

Հատակները սալարկված են:

Տանիքը հարթ տիպի է, գլանափաթթոցային ջրամեկուսիչ շերտով, ներքին կազմակերպված ջրահեռացմամբ:



Նկ. 6. Աջակողմյան մասնաշենքի (խանութի) և դրա տանիքի տեսքը

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- ❖ Կենտրոնական մասնաշենքի կողաճակատային պատերում առկա են մինչև 2 մմ բացվածքով ուղղաձիգ, շարվածքի կարաններով արտահայտված ճաքեր: Առավել վնասված են ձախ կողաճակատային պատի եզրային հատվածները, որտեղ ճաքերի բացվածքը քիվի մոտ կազմում է 4-6 մմ (նկ. 7): Այստեղ առկա է նաև որոշ քարերի սառնաքայքայում:
- ❖ Բաց հարթակի լայնական հեծաններում առկա են բետոնի քայքայում և մերկացած ամրանների կոռոզիա (նկ. 8):
- ❖ Ձախակողմյան թևի հատվածամասի բակի կողմի անկյունային հատվածում հիմքերը մերկացած են, որի պատճառով դրանցում առկա են մինչև 10 մմ բացվածքով ուղղաձիգ և հորիզոնական ճաքեր (նկ. 9):
- ❖ Աջակողմյան մասնաշենքի տանիքածածկույթի վնասվածության պատճառով, միաձույլ երկաթբետոնե կարկասի որոշ տեղամասերում առկա են բետոնի և մերկացած ամրանների կոռոզիա, իսկ առաստաղներում՝ թրջման հետքեր (նկ. 10):
- ❖ Բոլոր մասնաշենքերի սալարկված հատակներում (իսկ կենտրոնական մասնաշենքի 1-ին հարկում) առկա են տեղական բնույթի նստվածքներ (նկ. 11):
- ❖ Արտաքին սանդուղքներում առկա են տեղական նստվածքներ: Առավել վնասված են կենտրոնական մասնաշենքի աջակողմյան և դեպի աջակողմյան մասնաշենքի աստիճանները, որտեղ բազալտաքարե աստիճանները մինչև 5 սմ չափով ունեն նստվածքներ և 1 սմ չափով տարանջատում հիմնական պատերից (նկ. 12): Այս վնասվածքները հիմնականում հետլիցքի վրա իրականացման արդյունք են:
  - ❖ Մասնաշենքերի և շրջակայքի քարաշար բազրիքներում առկա են քարերի զանգվածային պոկում և տեղաշարժեր (նկ. 13):
  - ❖ Նստվածքային բնույթի ճաքեր կան նաև ծառուղիների սալվածքներում: Այստեղ նկատվում են նաև որոշ չափով սողանքային երևույթներ:
  - ❖ Արտաքին Նոյուղագծի դիտահորը գտնվում է շենքից մեկից մեկուկես մետր հեռավորության վրա և այն հաճախակի խափանվում է:

Ելնելով հետազննության արդյունքներից թանգարանի մասնաշենքի տեխնիկական վիճակը ընդհանուր առմամբ գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության մակարդակն ըստ գործող շինարարական նորմերի և հետազզնության մեթոդական ցուցումների դասվում է 3-րդ աստիճանի:



ՀՀ քաղաքաշինության նախարարություն «ՔԾՓԿ» ՊՈԱԿ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն «ՔԾՓԿ» ՊՈԱԿ

Նկ. 7. Կենտրոնական մասնաշենքի ձախակողմյան պատի վնասվածքները



Նկ. 8. Լայնական հեծանների վիճակը



Նկ. 9. Ճաքերի տեսքը ծայրամակողման հատվածամասի անկյունային հատվածում



Նկ. 10. Աջակողմյան մասնաշենքի հեծանների
և առաստաղների տեսքը



Նկ. 11. Կենտրոնական և ձախակողմյան հատվածամասի
հատակների վիճակը



Նկ. 12. Արտաքին սանդուղքների վնասվածքները



Նկ. 13. Քարաշար բազրիքների վիճակը

Թանգարանի մասնաշենքի հետագա բնականոն ու անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ տեխնիկական միջոցառումները՝

- Ձախակողմյան հատվածամասի անկյունային վնասված տեղամասերում հիմքերն ուժեղացնել տակդիրացմամբ և ներբանի լայնացմամբ, նախապես ճաքերի մեջ ներարկելով ցեմենտավազե կամ պոլիմերցեմենտային շաղախ: Այդ տեղամասերում հիմքերն ուժեղացնել երկկողմանի միմյանց հետ կապված միաձույլ երկաթբետոնե «շապիկ»-ներով, որը պետք է սկսվի հիմքի ներբանից և ավարտվի շենքի գետնախարսխային հատվածում:
- Քանի որ կենտրոնական մասնաշենքի պատերն ունեն զարդաքանդակներ, ուստի առաջարկում ենք առկա ճաքերի մեջ ներարկել պոլիմերցեմենտային շաղախ և հետևել դրանց հետագա դինամիկային: Ճաքերի զարգացման դեպքում, իրականացնել հիմքերի և պատերի ուժեղացում «շապիկ»-ներով:
- Բաց հարթակի լայնական առավել վնասված հեծանները ուժեղացնել պողպատե գոտեկապերով, նախապես մաքրելով բետոնի և ամրանների կոռոզիայի ենթարկված շերտերը: Մնացած հեծաններն, ինչպես նաև գոտեկապերն սվաղել ցեմենտավազե շաղախով:
- Նորոգել ձախակողմյան թևի (խանութային) մասնաշենքի տանիքածածկույթը, իսկ կարկասի վնասված հեծանների ամրանները մաքրել ժանգաշերտից և սվաղել ցեմենտավազե շաղախով:
- Մասնաշենքերում իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ, վերացնելով վերը նշված մյուս վնասվածքները:

Բոլոր աշխատանքները իրականացնել ըստ գործող շինարարական նորմերի մշակված և սահմանված կարգով համաձայնեցված նախագծի:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՔԾԻ» ՓԲԸ

Թիվ 12 լաբ. առաջատար ճարտարագետ Հ.Մկրտչյան